«Ծաղկաձոր օփեն - 2018» շախմատի միջազգային մրցաշար

Ս.թ. հոկտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 1-ը Հայաստանի շախմատի ակադեմիան Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հետ համատեղ կազմակերպում է «Ծաղկաձոր օփեն» շախմատի միաջազգային մրցաշար, որը տեղի կունենա Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոցում (ք. Ծաղկաձոր, Կոտայքի մարզ, ՀՀ): Մրցաշարի հովանավորներն են «Նորֆոլկ քոնսալթինգ» ՍՊԸ-ն և «Ռոյալ» ժամանցի կենտրոնը:
Մրցաշարը կանցկացվի Ա և Բ խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն:

Ա մրցաշարում իրավունք ունեն մասնակցելու 2000-ից բարձր միջազգային գործակից ունեցող շախմատիստները:
Բ մրցաշարում իրավունք ունեն մասնակցելու 2000-ից ցածր միջազգային գործակից ունեցող և վարկանիշ չունեցող շախմատիստները:

Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 15 500 ԱՄՆ դոլար:

Հիմնական մրցանակներ

Ա մրցաշար				Բ մրցաշար	
1-ին տեղ	$ 4000	6-րդ տեղ	$ 500	1-ին տեղ	$ 800
2-րդ տեղ	$ 2500	7-րդ տեղ	$ 400	2-րդ տեղ	$ 600
3-րդ տեղ	$ 1500	8-րդ տեղ	$ 300	3-րդ տեղ	$ 500
4-րդ տեղ	$ 800	9-րդ տեղ	$ 300	4-րդ տեղ	$ 250
5-րդ տեղ	$ 600	10-րդ տեղ	$ 300	5-րդ տեղ	$ 150

Հատուկ մրցանակներ

Ա մրցաշար		Բ մրցաշար	
Մինչև 2400 միջազգային գործակից ունեցող	$ 300	50+ վետերան	$ 100
Մինչև 2200 միջազգային գործակից ունեցող	$ 300	Մինչև 8տ. տղա	$ 50
50+ վետերան	$ 200	Մինչև 8տ. աղջիկ	$ 50
		Մինչև 10տ. տղա	$ 100
Կանանց 1-ին տեղ	$ 350	Մինչև 10տ. աղջիկ	$ 50
Կանանց 2-րդ տեղ	$ 250	Մինչև 12տ. տղա	$ 100
Կանանց 3-րդ տեղ	$ 100	Մինչև 12տ. աղջիկ	$ 50

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը որոշվում են ըստ՝
ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,
բ) սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
գ) հաղթանակների առավելագույն քանակի:

Ա մրցաշարում 1-10-րդ տեղեր գրաված մասնակիցների հավասար միավորներ վաստակելու դեպքում կկիրառվի Հորտի բանաձևը լրացուցիչ ցուցանիշներով:
Հատուկ մրցանակները չեն կիսվում և բաժանվում են համաձայն մրցաշարային աղյուսակում գրաված վերջնական տեղի:
Բ մրցաշարում 1-5-րդ տեղեր գրաված մասնակիցների հավասար միավորներ վաստակելու դեպքում կկիրառվի Հորտի բանաձևը լրացուցիչ ցուցանիշներով:
Հատուկ մրցանակները չեն կիսվում և բաժանվում են համաձայն մրցաշարային աղյուսակում գրաված վերջնական տեղի:
Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Ժամակարգ

Ա մրցաշար. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:
Բ մրցաշար. 90 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Խաղասկզբի համար սահմանված ժամից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:

Մուտքավճարներ

Ա մրցաշար		Գումար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ,		Անվճար
2450-ից բարձր միջազգային գործակից ունեցող շախմատիստ		Անվճար
2301-2450 միջազգային գործակից ունեցող շախմատիստ	ՖՎ	15 000
	Կոչում չունեցող	20 000
2201-2300 միջազգային գործակից ունեցող շախմատիստ	ՖՎ	20 000
	Կոչում չունեցող	25 000
2101-2200 միջազգային գործակից ունեցող շախմատիստ		30 000
2001-2100 միջազգային գործակից ունեցող շախմատիստ		35 000

Բ մրցաշար	Գումար
ՄՎ, ՖՎ, ԿՄՎ, ԿՖՎ	Անվճար
1901-2000 միջազգային գործակից ունեցող շախմատիստ	10 000
1801-1900 միջազգային գործակից ունեցող շախմատիստ	15 000
Մինչև 1800 միջազգային գործակից ունեցող շախմատիստ	20 000
Միջազգային գործակից չունեցող շախմատիստ	25 000

Մրցաշարի ցուցակագրման վերջնաժամկետն է ս.թ. հոկտեմբերի 19-ը:

Ժամանակացույց		
Ժամանում	հոկտեմբերի 22	
Բացման արարողություն	հոկտեմբերի 22	ժամը 18:00
1-ին տուր	հոկտեմբերի 23	ժամը 15:00
2-րդ տուր	հոկտեմբերի 24	ժամը 15:00
3-րդ տուր	հոկտեմբերի 25	ժամը 15:00
4-րդ տուր	հոկտեմբերի 26	ժամը 15:00
5-րդ տուր	հոկտեմբերի 27	ժամը 15:00
6-րդ տուր	հոկտեմբերի 28	ժամը 15:00
7-րդ տուր	հոկտեմբերի 29	ժամը 15:00
8-րդ տուր	հոկտեմբերի 30	ժամը 15:00
9-րդ տուր	հոկտեմբերի 31	ժամը 11:00
Փակման արարողություն	հոկտեմբերի 31	ժամը 18:00
Մեկնումը Երևան	հոկտեմբերի 31	ժամը 19:30

Մասնակիցների տեղափոխումը Երևանից Ծաղկաձոր /մեկ ուղղությունը/ կարժենա 2000 ՀՀ դրամ: Ավտոբուսը կմեկնի Հայաստանի շախմատի ակադեմիայի բակից (Շևչենկո 34):

Գրանցման և հյուրանոցների ամրագրման համար դիմել Հայաստանի շախմատի ակադեմիա: Սենյակների քանակը խիստ սահմանափակ է:

ՀՀ, ք. Երևան 0050, Շևչենկո 34
+374 10 44 84 73 /76/
chessacademyarm@gmail.com
+374 99 44 84 79

Վճարումներ կատարելու համար գործում է նաև ներքոնշյալ հաշվեհամարը:
Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել անուն, ազգանուն և հեռախոսահամար:

Շահառու՝ Նորֆոլկ քոնսալթինգ ՍՊԸ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ **1570026624820600**

Ծանոթագրում

- Աշոտ Անաստասյանի հիշատակին նվիրված կայծակնային մրցաշարը կանցկացվի ս.թ. նոյեմբերի 1-ին Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34):
- Երևան Օփեն միջազգային մրցաշարը /www.yerevanopen.yerevanchessfed.com/ կընթանա ս.թ. նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 11-ը Հայաստանի շախմատի ակադեմիայում:

Մրցաշարերին գրանցվելու և մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող եք զանգահարել +374 10 44 84 79 հեռախոսահամարին:





Ծաղկաձոր Մարիոթ

Քոթեջ/մեկտեղանոց - 25 000
Դելյուքս թվին/երկտեղանոց - 15 000

Սենյակների արժեքները նշված են 1 անձի,
1 գիշերվա համար և ներառում են նախաճաշ:
Ճաշը և ընթրիքը «Ռոյալ»-ում
կարժենան 3000-ական դրամ:






Արարատ Ռեզորթ

Կլասիկ մեկտեղանոց - 25 000
Կլասիկ երկտեղանոց - 15 000

Սենյակների արժեքները նշված են 1 անձի,
1 գիշերվա համար և ներառում են
նախաճաշ և ընթրիք: Ճաշը
կարժենա 5000 դրամ:





Մուլտի Ռեստ Հաուս

Մեկտեղանոց - 25 000
Երկտեղանոց - 15 000
Քոթեջ /2 անձի համար/ - 25 000
Քոթեջ /4 անձի համար/ - 15 000

Սենյակների արժեքները նշված են 1 անձի,
1 գիշերվա համար և ներառում են
երեքանգամյա սնունդ:





Ալպինա հանգստյան տուն

Մեկտեղանոց - 15 000
Երկտեղանոց - 10 000

Սենյակների արժեքները նշված են 1 անձի,
1 գիշերվա համար և ներառում են
երեքանգամյա սնունդ:





Գրողների տուն

Մեկտեղանոց /նախաճաշով/ - 6 500
Մեկտեղանոց /երեքանգամյա սնունդով - 8 000
Երկտեղանոց /նախաճաշով/ - 5 500
Երկտեղանոց /երեքանգամյա սնունդով/ - 7 000

Սենյակների արժեքները նշված են
1 անձի, 1 գիշերվա համար:

TSAGHKADZOR OPEN CHESS TOURNAMENT

22 հոկտեմբերի-1 նոյեմբերի, 2018թ.
Ծաղկաձոր, Հայաստան
www.tsaghkadzoropen.chessacademy.am

CHESS ACADEMY ARMENIA
Armenian Chess Federation
NORFOLK
Royale ENTERTAINMENT CENTER CASINO RESTAURANT CAFÉ CLUB
MARRIOTT TSAGHKADZOR